ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Կոնդակ Կ. Պոլսի Նախկին պատրիարքական տեղապահ Տ. Գաբրիէլ եպիսկոպոս Ճէվահիրճեանի անունով, որով, ըստ միջնորդութեան Կ. Պոլսի Հայոց ամենապատիւ պատրիարքի և կրօնական ժողովի, շնորհուեց արքութեան պատիւ՝ նորա բարւոք երկարաժամեայ ծառայութեան համար։ 11 մարտի, թ. 348։

Կոնդակ Նոր-Նախիջևանի փոխանորդ Տ. Գէորգ վարդապետ Զէօրեքչեանի անունով, որով վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 26 մարտի, թ. 443։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Վրթանէս վարդապետի անունով, որով մետաքսեայ սև ծաղկեայ փիլոն ծածկելու իրաւունք շնորհուեց։ 26 մարտի, թ. 444։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան Եգիպտոսի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ատենապետ Վասիմափայլ Պօղոս փաշա Նուպարի, փոխ-ատենապետի և Վարչութեան բոլոր անդամների անունով՝ միութեան ցոյց տուած ազգօգուտ գործունէութեան առթիւ։ 4 մարտի, թ. 329։

Դիւանի գրութիւն պ. Արգար Գուլամիրեանի անունով, որով վերադարձուեց նորա կազմած 1915 թ. օրացոյցը և թոյլատրուեց տպագրութեան յանձնելոյն։ 4 մարտի, թ. 333։

Դիւանի գրութիւն Երևանի փոխ-թեմակալի, Ղարաբաղի ժամ. կառավարչի և Վրաստանի Առաջնորդի անունով, որով պատուիրուեց մանրամասն տեղեկութիւն ներկայացնել Նորին Վեհափառութեան, թէ 1912 թ. դեկտեմբ-

20-ի օրէնքի համաձայն վանական և եկեղեցական հողերի յետգնման խնդիրն ինչ վիճակի մէջ է և մինչև այժմ ինչ է արուած այդ գործի վերաբերմամբ։ 4 մարտի, թ. թ. 339, 340, 341։

Կոնդակ օրհնութեան Տաթևի շրջանի Բարահունջ գիւղի ծխական Հոգաբարձութեան, պ. պ. Յովհաննէս, Պատուական, Շամիր և Թարխան Մատուրեան եղբ. և պ. Գրիգոր Հայրապետեանի անունով, որոնք օժանդակել են Բարահունջի դպրոցի շինութեան գործին։ 12 մարտի, թ. 364։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց ս. Էջմիածնի Սինօդին Դպրոցական Ֆոնդի օգտին 333 ռուբլի 95 կոպ., որ փոխադրել է Ամերիկայի Նիւ-Եօրք քաղաքի Հայ գործաւորաց Որբախնամ Ընկերութիւնը։ 13 մարտի, թ. 372։

Կոնդակ օրհնութեան և գոհունակութեան պ. Եօհան Գէորգևիչ Կոնդուրովի անունով Տաթևի շրջանի Կաւարտ գիւղի ծխական դպրոցի շինութեան համար 12,000 ռուբլի ծախսելու և տարեկան 600-ական ռուբլի նպաստ տալու համար իւր հօրեղբօր որդու հետ միասին։ 13 մարտի, թ. 375։

Դիւանի գրութիւններով յայտնուեց Վրաստանի թեմի Առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին, ս. Էջմիածնի Սինօդի անդամ Տ. Մատթէոս եպիսկոպոսին և երդուեալ հաւատարմատար պ. Սամսոն Ս. Յարութիւնեանցին, որ Նորին Սրբութեան յատուկ հաւատարմագրով կարգուած են ստանալու հանգուցեալ Աւետիս Բալայեան Ղուկասեանի և Թամարա Ղուկասեանի կտակակատարներ պ. պ. Մնացական Յովհաննիսեան, Խունունցից և Պօղոս Յովսէփեան Ղուկասեանցից առանձին արձանագրութեամբ և կանոնաւոր կազմած ցուցակներով բոլոր շարժական և անշարժ գոյքը, պատրաստի դրամը և ներկայացնելու Նորին Սրբութեան։ 17 մարտի, թ. թ. 401, 402, 403։

Նորին Սրբութեան մակագրութեամբ ուղարկելով Թազա գիւղի ուսուցիչ Աստուածատուր Վարդանեանի ծննդեան և ուսման վկայականը ս. Էջմիածնի Սինոդին՝ պատուիրուեց ընդունել նորան Սևանայ կուսակրօն միաբանութեան շարքը և Երևանի փոխ-թեմական միջոցով տեղեկութիւն տալ Վարդանեանին: 17 մարտի, թ. 404:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ղարսի Հայոց Հոգևոր կառավարութեան անմիջապէս վերադարձնել Տարօնի վիճակի Թարապաշիհէր գիւղի Բաղդասար քահանայ Մխիթարեանին, որը, ինչպէս տեղեկացնում է Տարօնի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոս Թարախանեանը, ինքնագլուխ առանց հոգևոր իշխանութեան գիտութեան և թոյլտուութեան անցել է Ռուսաստան: 18 մարտի. թ. 413:

Կոնդակ ս. Էջմիածնի Սինոդի անունով, որով ուղարկուեց Տփխիսի Հայոց Կեդրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի ուղարկած 94,600 ռուբլու Տփխիսի Առևտրական դրամատան թ. 5166 վկայականը՝ առաջադրուեց նախ՝ հաշուետուութեամբ առանձին հաշիւ բանալ 94600 ռուբլու համար, արձանագրելով արժէթղթերի բոլոր համարները և ապա կանոնաւորապէս ստանալ գումարի տոկոսները. երկրորդ՝ պահել այդ դրամագլուխը անձեռնմխելի և գործադրել միայն նորա տոկոսները այն հայաբնակ գիւղերի եկեղեցական-ծխական դպրոցների վրայ, որոնք 1905—1906 թ. թ. հայ-թրքական ընդհարումների ժամանակ աւելի են քայքայուել տնտեսապէս. և երկրորդ՝ ազգային աղէտի կամ թշուառութեան դէպքում՝ դրամագլխի տոկոսները գործադրել արկածեալների վրայ:

Կոնդակի երկրորդ և երրորդ յօդուածներում յիշուած Հայրապետական կարգադրութիւնը կատարելիս Սինոդն ամեն անգամ պէտք է ստանայ Նորին Վեհափառութեան հրամանը: 18 մարտի, թ. 414:

Կոնդակ Տփխիսի Հայոց Կեդրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովի անունով, որով տեղեկութիւն տրուեց նորա ուղարկած 94600 ռուբ. № 5166 վկայականի ստացման և

Մինասի անունով արած կարգադրութեան մասին. այլ և զոհունակութիւն և օնհնութիւն յայտնուեց Ցանձնաժողովին, որ իւր կազմակերպութիւնից յետոյ զգալի օգուտ է ցոյց տուել 1905—1906 թ. թ. հայ-թրքական ընդհարումներից վնասուածներին ու թշուառներին: 18 մարտի, թ. 415:

Դիւանի գրութեամբ յանձնուեց Մայր Աթոռի մատենադարանապետ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին պ. Սիմէոն Հայրապետեան Հախումեանցի Երևանի փոխ-թեմական Տ. Խորէն եպիսկոպոսի միջոցով ուղարկած հետևեալ ձեռագրերը: 1) Գրիգոր Տաթևացի, ամռան հատոր, 2) Մեկնութիւն Աւետարանի, ըստ Յովհաննու, XVII դարու թարգմանութիւն. 3) Մաշտոց XVII դարու. 4) Ատենի ժամագիրք տպուած XVII դարու (1642 թ.): 25 մարտի. թ. 441:

ՄԻՆՕՂԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ԲԱՂՈՒԱԾՆԵՐ

Մինասը՝ համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրական պատուէրի, որոշեց. թոյլ տալ Շամախու Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել և ձեռնադրել քհնյ. Դէօքչայի գաւ. Ադայիշէն գիւղի վրայ նոյն գիւղացի Աբեթնազով Թամրազեանցին: 26 փետրուարի, թ. 81:

Մինասը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի այս տարուայ փետրուարի 4-ի, № 305 յայտարարութիւնը, որոշեց. նախ՝ բացատրել նոյն Կոնսիստորիային, որ Հայ-լուսաւորչական գաւանութիւն ընդունած հրէաները կարող են նորից գաւանել իրենց գաւանութեան՝ համաձայն 1905 թ. ապրիլի 17-ի Բարձրագոյն հրովարտակի, և, երկրորդ, վերջապէս յիշեցնել Կոնսիստորիային, որ հրէաներին հայ-լուսաւորչական եկեղեցու գիրկն ընդունելիս լինեն խիստ զգոյշ և ամեն անգամ ստուգեն, թէ նրանք ներքին համոզմունքից դրդուած են գիմում քրիստոնէութեան, թէ ուրիշ նկատումներով: 26 փետրուարի, թ. 83: